



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 50-Ա
03 ՀՈՒՆԻՍԻ 2021թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի ԹԻՎ 5
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը նիստի օրակարգը հաստատելու մասին, Կապան համայնքի ավագանին *որոշում է.*

Հաստատել Կապան համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 3-ի թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով 2021 թվականի ծրագրային հայտեր ներկայացնելուն համաձայնություն տալու մասին

2. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան համայնքի Կապան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 35/56 հասցեում գտնվող 5.8 քառ.մ մակերեսով տարածքը հրապարակային սակարկություններով օտարելու մասին

3. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Ներքին Հանդրակավայրի 2-րդ փողոցի թիվ 12 շենքի թիվ 2 բնակարանը անհատույց (նվիրատվության կարգով) օտարելու մասին:

4. Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին պայմանագրից ծագած պարտավորությունները ներելու մասին

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Գեղանուշ, Սյունիք և Օխտար գյուղերում փողոցները անվանակոչելու մասին

6. Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական սահմաններում (Նորաշենիկ բնակավայր) գտնվող 0.8101 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

7. Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական սահմաններում (Նորաշենիկ բնակավայր) գտնվող 0.89747 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

8. Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական սահմաններում (Սյունիք բնակավայր) գտնվող 0.76338 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

9. Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու և 0.73872 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

10. Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական սահմաններում (Անտառաշատ բնակավայր) գտնվող 0.02256 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

11. Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու և 0.53342 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

12. Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական սահմաններում (Արծվանիկ բնակավայր) գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և <<Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ>> ՓԲ ընկերությանը կառուցապատման իրավունքով հողամաս հատկացնելու մասին

13. Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական սահմաններում (Չափնի բնակավայր) գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և <<Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ>> ՓԲ ընկերությանը կառուցապատման իրավունքով հողամաս հատկացնելու մասին

14. Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական սահմաններում (Սևաքար բնակավայր) գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և <<Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ>> ՓԲ ընկերությանը կառուցապատման իրավունքով հողամաս հատկացնելու մասին

15. Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2007 թվականի հոկտեմբերի 05-ի N 42-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

16. Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու և 0.1693 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

Կողմ (10)

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ

ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ

ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ

ԴԵՄ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. հունիսի 03

ք. Կապան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 51-Ա
03 ՀՈՒՆԻՍԻ 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՅԻԱՆԵՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տարամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 12-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, *համայնքի ավագանին որոշում է.*

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով թույլատրել ներկայացնելու հետևյալ ծրագրային հայտերը.

1) ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի հասարակական շենքերի նորոգում՝ «Ծավ բնակավայրի վարչական շենքի /նախկինում գյուղապետարանի/ վերանորոգում», «Վերին Խոտանան գյուղում հանդիսությունների սրահի /կենցաղի տան/ վերանորոգում», «Չափնի գյուղում հանդիսությունների սրահի /կենցաղի տան/ վերանորոգում», «Շիկահող բնակավայրի ակումբի շենքի տանիքի վերանորոգում», «Դավիթ Բեկ գյուղի մշակույթի տան շենքի վերականգնում», «Վարդավանք գյուղի ակումբի շենքի վերանորոգում», «Արծվանիկ բնակավայրի բուժկետի վերանորոգում», «Թիվ 3 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի կառուցում», «Մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի վերանորոգում» ծրագրային հայտ, հավելված 1:

2) ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի «Սևաքար գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում», «Վարդավանք բնակավայրի ջրամատակարարում» և «Չափնի գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրային հայտ, հավելված 2:

3) ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի «Աճանան գյուղի ոռոգման համակարգի վերակառուցում» ծրագրային հայտ, հավելված 3:

4) ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի «Կապան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի 12 նկուղային և կիսանկուղային հարկերի նորոգում» ու «Կապան քաղաքի

բազմաբնակարան բնակելի շենքերի 16 հարթ և 9 լանջավոր տանիքների վերանորոգում»
ծրագրային հայտ, հավելված 4:

5) ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի «Կապան քաղաքի Դավիթ Բեկ հրապարակի, Ռ. Մինասյան փողոցի մայթերի հիմնանորոգում, հենապատերի վերանորոգում, Կավարտ գետակի մի հատվածի մաքրում և հենապատի վերանորոգում», «Կապան քաղաքի Թումանյան փողոցի մայթերի և աստիճանների հիմնանորոգում, հենապատերի վերանորոգում», «Կապան քաղաքի Ռ. Մելիքյան փողոցի մայթերի և աստիճանների հիմնանորոգում, հենապատերի վերանորոգում», «Կապան քաղաքի Հալիձոր թաղամասի մուտքի և 9, 13, 17, 18, 19 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ», «Կապան քաղաքի Ձորք թաղամասի հիմնական փողոցը և հարակից 4, 5, 6, 12, 13 և 15 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ», «Կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասի թիվ 14, 15, 16, 18, 19, 20, 21 շենքերի բակերի նորոգման աշխատանքներ», «Կապան քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 5, 8 շենքերի բակերի նորոգման աշխատանքներ», «Կապան քաղաքի Մանուկյան փ. N 3, 5 և Թումանյան փ. N 16, 18 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ», «Կապան քաղաքի Մ. Հարությունյան փողոցի Շահումյան փողոցից մինչև ոստիկանության վարչություն հատվածի և N 10, N 12, N 14 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ», «Կապան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 2, 9, 10, 11, 13, 14, 15, 17, 19, 20, 21, 23, 25, 27, 29, 31, 33, 39, 39ա շենքերի բակերի նորոգման աշխատանքներ», «Կապան քաղաքի Ա. Մանուկյան փողոցի մայթի մի հատվածի /Թումանյան, Հ. Ավետիսյան, Ա. Մանուկյան փողոցների հատման կամրջից մինչև Ա. Մանուկյան I-ին նրբանցք թիվ 2 բ/բ շենքի դիմաց/ վերանորոգում, ծառատնկում, կանաչապատ տարածքների վերականգնում և բարեկարգում» և «Կապան համայնքի Գեղանուշ գյուղ տանող ճանապարհի վերանորոգում. հատված կմ2+700-կմ4+565»
ծրագրային հայտ, հավելված 5:

2. Սուբվննցիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Սյունիքի մարզպետարան ներկայացնել ծրագրերի ամբողջական փաթեթները:

Կողմ (10)

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ



2021թ. հունիսի 03

ք. Կապան

Հ Ա Յ Տ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների
զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	Կապան համայնքի հասարակական շենքերի նորոգում՝ «Ծավ բնակավայրի վարչական շենքի /նախկինում գյուղապետարանի/ վերանորոգում», «Վերին խոտանան գյուղում հանդիսությունների սրահի /կենդանի տան/ վերանորոգում», «Չափնի գյուղում հանդիսությունների սրահի /կենցաղի տան/ վերանորոգում», «Շիկահող բնակավայրի ակումբի շենքի տանիքի վերանորոգում», Կապան համայնքի Դավիթ Բեկ գյուղի «Մշակույթի տան շենքի վերականգնում», Կապան համայնքի Վարդավանք գյուղի «Ակումբի շենքի վերանորոգում», «Արծվանիկ բնակավայրի բուժկետի վերանորոգում», «Թիվ 3 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի կառուցում», «Մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի վերանորոգում»
Մարզ	Սյունիքի մարզ
Համայնքը /համայնքները	Կապան /մարզկենտրոն/, գյուղական բնակավայրեր՝ Ագարակ, Աղվանի, Աճանան, Անտառաշատ, Առաջածոր, Արծվանիկ, Գեղանուշ, Գոմարան, Դավիթ Բեկ, Եղեգ, Եղվարդ, Խղրանց, Ծավ, Շիշկերտ, Կաղնուտ, Ջորաստան, Ճակատեն, Ներքին խոտանան, Ներքին Հանդ, Նորաշենիկ, Շիկահող, Շրվենանց, Չափնի, Սևաքար, Սյունիք, Բարգուշատ, Ղիցմայրի, Խորձոր, Ազնակ, Սրաշեն, Վանք, Վարդավանք, Վերին խոտանան, Տանձավեր, Տավրուս, Ուժանիս, Օխտար:
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	Կապանը մարզկենտրոն է, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 316 կմ Ծավ բնակավայր՝ Երևանից 353 կմ, Կապանից՝ 37 կմ Վարդավանք բնակավայր՝ Երևանից 312 կմ, Կապանից՝ 14 կմ Վերին խոտանան բնակավայր՝ Երևանից 329 կմ, Կապանից՝ 25 կմ Չափնի բնակավայր՝ Երևանից 298 կմ, Կապանից՝ 19 կմ Դավիթ Բեկ բնակավայր՝ Երևանից 291 կմ, Կապանից՝ 25 կմ Շիկահող բնակավայր՝ Երևանից 337 կմ, Կապանից՝ 21 կմ Արծվանիկ բնակավայր՝ Երևանից 302 կմ, Կապանից՝ 14 կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	Կապան համայնք – 44569 /01.01.2021թ. դրությամբ/ Կապան քաղաք– 38358 Ծավ բնակավայր –192 Վարդավանք բնակավայր –118 Վերին խոտանան բնակավայր –207 Չափնի բնակավայր –110 Դավիթ Բեկ բնակավայր –739 Շիկահող բնակավայր –223 Արծվանիկ բնակավայր –665
Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի	Համաձայն ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 17-ի «ՀՀ սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» N 713

	որոշման թիվ 1 հավելվածով հաստատված ցանկի, Կապան համայնքի Կապան քաղաքը, Ծավ, Վարդավանք, Վերին Խոտանան, Դավիթ Բեկ, Շիկահող, Արծվանիկ բնակավայրերը հանդիսանում են սահմանամերձ:
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	Այո Կապան քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծը հաստատվել է 2006թ. նոյեմբերի 30-ի N 1729-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ: Իսկ 2015թ. հոկտեմբերի 8-ին Կապան համայնքի ավագանու N 68-Ա որոշմամբ հաստատվել են գլխավոր հատակագծում կատարված փոփոխությունները: Կապան համայնքի ավագանին 2021 թվականի մարտի 17-ին հաստատել է «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սյունիք 1 միկրոոնգիտնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Կապան համայնքի Ագարակ, Աղվանի, Աճանան, Անտառաշատ, Առաջածոր, Արծվանիկ, Գեղանուշ, Գոմարան, Դավիթ Բեկ, Եղեգ, Եղվարդ, Ուժանիս, Խոյրանց, Ծավ, Շիշկերտ, Կաղնուտ, Ձորաստան, Ճակատեն, Ներքին Խոտանան, Ներքին Հանդ, Նորաշենիկ, Շիկահող, Շրվենանց, Չափնի, Սևաքար, Սյունիք, Դիցմայրի, Խործոր, Ազնակ, Բարգուշատ, Սրաշեն, Վանեք, Վարդավանք, Վերին Խոտանան, Տանձավեր, Տավրուս, Օխտար բնակավայրերի գլխավոր հատակագծերի նախագծերը /գոտևորման նախագծերը/ և Կապան քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված տարբերակի նախագծերը /գոտևորման նախագծերը/ հաստատելու մասին» թիվ 31-Ա որոշումը:
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝	Կապան /քաղաքային/ 1 թաղամաս/, Աճանան և Սյունիք բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից: Կապան համայնքի բնակչության 85,5 %-ի /կամ քաղաքի բնակչության 99,3%/ ջրամատակարարումն իրականացվում է շուրջօրյա: Գյուղական բնակավայրերում ջրամատակարարումը կախված է տարվա եղանակից, սակավաջուր ամիսներին կամ երաշտի ժամանակ ջուր են ստանում օրական մինչև 4 ժամ, կան առանձին գյուղեր, որոնք խմելու ջրի խնդիր ունեն: 2020 թվականին սուրվենցայի ծրագրով մեկնարկել է «Կապան համայնքի Եղվարդ գյուղի խմելու ջրագծի կառուցում և Ագարակ գյուղի ջրագծի վերանորոգում ու ՕԿՋ-ի կառուցում, խմելու ջրի Ներքին ցանցի կառուցում» ծրագիրը, որը նախատեսվում է ավարտել 2021 թվականի հունիսին: Եվս երեք գյուղերի խմելու ջրագծերի և ՕԿՋ-ների կառուցման համար 2021 թվականին Կապան համայնքը դիմել է համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված աուրվենցիայի:
- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,	Կապան քաղաքի ջրահեռացումը հիմնականում կենտրոնացված է, իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից, այսինքն բնակչության ~ 85 % օգտվում է կենտրոնացված ջրահեռացումից, գյուղերում ջրահեռացումը կենտրոնացված չէ, յուրաքանչյուրն իր համար լուծում է գտել:
- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,	Կապան /քաղաքային/ 3 թաղամաս/, Աճանան, Սյունիք և Ազնակ բնակավայրերի բնակչության կամ համայնքի բնակչության 87,7%-ի համար ստեղծված են գազամատակարարումից օգտվելու պայմաններ:
- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում	Կապան համայնքում ոռոգման համակարգից օգտվելու հնարավորություն առկա է դրա անհրաժեշտությունն ունեցող բնակչության 23,2 % բնակչության մոտ: Մնացած բնակչությունը աղբյուրից կամ գետից սեփական միջոցներով ոռոգման ջուր է անցկացրել:

գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,

Կապան համայնքում ոռոգման ենթակա գյուղատնտեսական /առանց արոտ, խոտհարք և այլ/ նշանակության հողերը կազմում են **4648,46** հա, որից փաստացի ոռոգվում են 490,7 հա, այսինքն՝ 10,56 %-ը:

- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և LED լուսավորություն է, թե ոչ

Փողոցային լուսավորության համակարգ առկա է Կապան քաղաքի 96,2 % փողոցներում: Կապան քաղաքի լուսավորությունը ամբողջությամբ LED լուսավորություն է: Բոլոր գյուղական բնակավայրերում արդեն անցել են LED լուսավորության, բացառությամբ 7 գյուղերի, որտեղ տեղադրվել են 190 հատ արևային պրոժեկտորներ:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- Կապան համայնքի Ծավ բնակավայրի «Վարչական շենքի /նախկինում գյուղապետարանի/ վերանորոգում»,
- «Վերին Խոտանան բնակավայրի հանդիսությունների սրահի նորոգում»,
- «Չափնի բնակավայրի հանդիսությունների սրահի նորոգում»,
- «Շիկահող բնակավայրի ակումբի շենքի տանիքի վերանորոգում»,
- «Դավիթ Բեկ գյուղի մշակույթի տան շենքի վերականգնում»,
- «Վարդավանք գյուղի ակումբի շենքի վերանորոգում»,
- «Արծվանիկ բնակավայրի բուժկետի վերանորոգում»,
- «Թիվ 3 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի կառուցում»,
- «Մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի վերանորոգում»:

Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը

• **Ծավ բնակավայրի վարչական շենքը** կառուցվել է 1970-ական թվականներին: Տվյալ շենքում են տեղակայվում գյուղի բուժկետն ու գրադարանը: Վարչական շենքը երկու հարկանի 16,0x11,5մ արտաքին եզրաչափերի, ուղղանկյունաձև հատակագծով, լանջավոր տանիքով շենք է: Շենքի կոնստրուկտիվ լուծումը տրված է երեք կրող երկայնական ու կապող լայնական պատերով և միջհարկային ծածկերի ու վերնածածկի հորիզոնական կոշտ սկավառակներով:

Համաձայն տեխնիկական եզրակացության, շենքի տեխնիկական վիճակը գնահատվել է բավարար /երկրորդ աստիճան/, այն է՝ կոնստրուկտիվ տարրերն ընդհանրապես պիտանի են շահագործման համար, բայց պահանջվում է որոշ կապիտալ նորոգում, որն ամենաանհրաժեշտն է տվյալ պահին: Շենքի տեխնիկական վիճակի հետազննությամբ պարզվել է, որ շենքի կոնստրուկտիվ տարրերում կան տարբեր աստիճանի վնասվածքներ, ճաքեր, ձևախախտումներ և թերություններ, մասնավորապես.

- տանիքածածկույթի և նրա ջրահեռացման համակարգի առանձին հատվածամասերի վնասվելու պատճառով մթնոլորտային տեղումների ջրերը պարբերաբար ներթափանցել են ներս՝ առաջացնելով տարբեր բնույթի վնասվածքներ:
- երկրաշարժային ազդեցությունների ժամանակ ե/բ ծածկերի սալերի միջև առաջացել են ճաքեր, քանի որ ժամանակին ծածկերի սալերի միջև կարանները լցված չեն եղել մանրահատիկ բետոնով կամ ցեմենտային ու պոլիմերցեմենտային շաղախով:
- շենքի շուրջ սալվածքի անբարեկարգ լինելու պատճառով մթնոլորտային տեղումների ջրերը ներ են թափանցում շենքի կոնստրուկտիվ համակարգ և հիմատակ:

• **Վարդավանք բնակավայրի ակումբի շենքը** կառուցվել է 1970-ական թվականներին: Ակումբի շենքում են տեղի ունենում տարբեր հանդիպումներ, միջոցառումներ, ինչպես նաև այն համարվում է տվյալ բնակավայրի բնակիչների համար միակ ժամանցի վայրը: Շենքը մեկ հարկանի 16,0x5,2մ արտաքին եզրագծերի, ուղղանկյունաձև հատակագծով, լանջավոր տանիքով շենք է: Վերջին տարիներին շինարարական նորոգման աշխատանքներ այստեղ չեն իրականացվել:

Համաձայն տեխնիկական եզրակացության, շենքի ֆիզիկական մաշվածությունը կազմում է մոտ 55 տոկոս կամ մաշվածության աստիճանը՝ 3-րդ /անբավարար/, իսկ շենքի փաստացի տեխնիկական վիճակը՝ վնասվածության աստիճանի հետ համատեղ, գնահատվել է անբավարար /ներորդ աստիճան/, այն է՝ կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր է միայն կապիտալ նորոգումից հետո:

Շենքի տեխնիկական վիճակի հետազննությամբ պարզվել է, որ շենքի կոնստրուկտիվ տարրերում կան տարբեր աստիճանի վնասվածքներ, ճաքեր, ձևախախտումներ և թերություններ, մասնավորապես.

- տանիքածածկույթի մաշվածության աստիճանը 61-85 տոկոս է, ինչի հետևանքով մթնոլորտային տեղումները պարբերաբար ներթափանցել են շենքի կոնստրուկտիվ տարրեր և առաջացրել տարբեր բնույթի վնասվածքներ:

- պատերում առկա են տարբեր բնույթի վնասվածքներ, պատերի արտաքին սվաղի տեխնիկական վիճակն անբավարար է, իսկ պատերի պատվանդանային մասերը և հատակից մինչև 1.5մ բարձրությամբ հատվածները գտնվում են խոնավ վիճակում:

- հատակի և առաստաղի մաշվածությունը 61-85 տոկոս է:
- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը քայքայվում են:

• **Վերին խոդանան բնակավայրի հանդիսությունների սրահի** շենքը կառուցվել է 1970-ական թվականներին՝ անհատական նախագծով: Շենքը մեկ հարկանի է, տեղադրված է նախապես հարթեցված տեղանքում, հատակագծում ուղղանկյունաձև է, քաղցաքան է երկու մասից՝ սրահից և խոհանոցից: Սրահի տանիքը երկլանջ է, խոհանոցինը՝ միալանջ, արտաքին անկազմակերպ ջրահեռացմամբ:

Համաձայն տեխնիկական եզրակացության, շենքի ֆիզիկական մաշվածությունը կազմում է մոտ 55 տոկոս կամ մաշվածության աստիճանը՝ 3-րդ /անբավարար/, իսկ շենքի փաստացի տեխնիկական վիճակը՝ վնասվածության աստիճանի հետ համատեղ, գնահատվել է անբավարար /ներորդ աստիճան/, այն է՝ կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր միայն կապիտալ նորոգումից հետո:

Շենքի սեյսմիկ խոցելիության մակարդակը /շենքի վարքը երկրաշարժի դեպքում/ գնահատվել է միջին:

Շենքի տեխնիկական վիճակի հետազննությամբ պարզվել է, որ շենքի կոնստրուկտիվ տարրերում կան տարբեր աստիճանի վնասվածքներ, ճաքեր, ձևախախտումներ և թերություններ, մասնավորապես.

- սրահի տանիքի ծածկույթի թերությունների պատճառով մթնոլորտային տեղումները պարբերաբար ներթափանցել են շենքի կոնստրուկտիվ տարրեր և վնասել կախովի առաստաղը:

- խոհանոցի տանիքի կավարամածային համակարգի և ծածկույթի մաշվածության աստիճանը 3 է, իսկ տեխնիկական վիճակը՝ անբավարար:

- պատերում որտեղ առկա են վնասվածքներ, տեղի է ունեցել սվաղի քայքայում: Պատերի պատվանդանային մասերը և հատակից մինչև 1.5մ բարձրությամբ հատվածները գտնվում են խոնավ վիճակում, քանի որ ինչպես հիմքերը, այնպես էլ պատերի գետնախարսխային մասերը չունեն ջրամեկուսիչ շերտ:

- Ներքին հարդարանքի ընդհանուր մակերեսի մոտ 80 տոկոսում առկա են զգալի վնասվածքներ, ջրագծերը և կոյուղու ներքին ցանցը բացակայում է:

- Չափնի բնակավայրի հանդիսությունների սրահի շենքը կառուցվել է 1960-ական թվականներին, իր ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներով չի համապատասխանում տիպային նախագծերին: Շենքը տեղադրված է մեղմ թեքության տեղանքում, հատակագծում ուղղանկյունաձև է, 20,0x8,0մ արտաքին չափերով, հարկի բարձրությունը հատակից առաստաղ 2,75մ է: Տանիքը քառալանջ է, արտաքին անկազմակերպ ջրահեռացմամբ: Կերջին տարիներին շենքում ուժեղացման կամ հիմնանորոգման աշխատանքներ չեն իրականացվել:

Համաձայն տեխնիկական եզրակացության, շենքի ֆիզիկական մաշվածությունը կազմում է մոտ 55 տոկոս կամ մաշվածության աստիճանը՝ 3-րդ /անբավարար/, իսկ շենքի փաստացի տեխնիկական վիճակը՝ վնասվածության աստիճանի հետ համատեղ, գնահատվել է անբավարար /երրորդ աստիճան/, այն է՝ կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր միայն կապիտալ նորոգումից հետո:

Շենքի սեյսմիկ խոցելիության մակարդակը /շենքի վարքը երկրաշարժի դեպքում/ գնահատվել է միջին:

Շենքի տեխնիկական վիճակի հետազննությամբ պարզվել է, որ շենքի կոնստրուկտիվ տարրերում կան տարբեր աստիճանի վնասվածքներ, ճաքեր, ձևախախտումներ և թերություններ, մասնավորապես.

- տանիքի ծածկույթի վթարային վիճակով և մաշվածության 61-85 տոկոսով պայմանավորված՝ տանիքից մթնոլորտային տեղումների ջրերը պարբերաբար ներթափանցել են շենքի կոնստրուկտիվ տարրեր և առաջացրել չափավոր ու զգալի վնասվածքներ:

- պատերի այն հատվածներում, որտեղ առկա են վնասվածքներ, տեղի է ունեցել սվաղի քայքայում: Պատերում կան մինչև 5մ բացվածքի լայնության ուղղաձիգ և թեք ճաքեր:

- պատերի պատվանդանային մասերը և հատակից մինչև 1.5մ բարձրությամբ հատվածները գտնվում են խոնավ վիճակում: Այս ամենը պայմանավորված է նրանով, որ ինչպես հիմքերը, այնպես էլ պատերի գետնախարսխային մասերը չունեն ջրամեկուսիչ շերտ:

- Ներքին հարդարանքի ընդհանուր մակերեսի մոտ 80 տոկոսում առկա են զգալի վնասվածքներ, ջրագծերը և կոյուղու ներքին ցանցը բացակայում է:

- **Դավիթ Բեկ բնակավայրի մշակույթի տան շենքը** կառուցվել է 1980-ական թվականներին: Շենքը մեկ և մասամբ երկու հարկանի կառույց է և իր ընդհանուր մակերեսի մոտ 40 տոկոսի չափով ունի նկուղային հարկ: Կերջին տասնամյակներում շահագործվել է շենքի մի հատվածը՝ պայմանավորված շենքի կոնստրուկտիվ տարրերում առկա տարբեր աստիճանի բազմաթիվ վնասվածքներով, ճաքերով և ձևախախտումներով: Մշակույթի տան շենքը հանդիսանում է գյուղի բնակիչների համար միակ ժամանցի կենտրոնը:

Համաձայն տեխնիկական եզրակացության, շենքը գտնվում է քարծիթողի և անմխիթար վիճակում: Շենքի ինչպես կրող, այնպես էլ

ոչ կրող կոնստրուկտիվ տարրերում առկա են տարբեր աստիճանի բազմաթիվ վնասվածքներ, ճաքեր, ձևախախտումներ, մասնավորապես՝

- Տանիքի ծածկույթի, ջրհորդանների և ջրահեռացման խողովակների ընդհանուր մակերեսի մոտ 20 տոկոսում կան ուժեղ, մոտ 20 տոկոսում՝ զգալի, և մոտ 30 տոկոսում՝ չափավոր, վնասվածքներ: Վնասված տեղերից մթնոլորտային տեղումների ջրերը պարբերաբար և ինտենսիվ կերպով ներթափանցել են շենքի կոնստրուկտիվ տարրեր և տարբեր տեղերում առաջացրել տարբեր աստիճանի վնասվածքներ: Տանիքի փայտե ծալեղային ու կավարամածային կոնստրուկցիաների տեխնիկական վիճակն անբավարար է, բազմաթիվ էլեմենտներ ունեն զգալի և մասամբ ուժեղ կենսաբանական վնասվածք: Ե/բ կոնստրուկցիաներից հատկապես շատ են վնասվել վերնածածկի հավաքովի ե/բ սալերը: Վնասված տեղերում բետոնը ուժեղ քայքայվել է:

- Պատերի ընդհանուր մակերեսի մոտ 30 տոկոսում կան ուժեղ վնասվածքներ, մոտ 40 տոկոսում՝ զգալի, մոտ 10 տոկոսում՝ թույլից չափավոր վնասվածքներ, իսկ մնացած 20 տոկոսի տեխնիկական վիճակը բավարար է: Պատերի վնասված հատվածամասերում մթնոլորտային տեղումների ջրերը թափվել են պատերին, խոնավացրել դրանք, ինչն ձմեռային եղանակների բացասական ջերմաստիճանի ժամանակ սառեցման-հալման պրոցեսով պայմանավորված բերել է սառնաքայքայման, ինչի հետևանքով առաջացել է քարաշարվածքի զգալի հողմնահարում, շերտավորում և քարերի մինչև 8 մմ չափերի տեղաշարժեր: Բազմաթիվ տեղերում պատերի դրսի տուֆաքարերի երեսապատման սալիկները թափվել են:

- Երկաթբետոնե կոնստրուկցիաների, ինչպես խոնավացման, այնպես էլ շինարարական աշխատանքների թերությունների հետևանքով, ամրանների բետոնե պաշտպանիչ շերտը այքայվել է, իսկ ամրանները և պողպատե ներդիր էլեմենտները ենթարկվել են համատարած զգալի և մասամբ ուժեղ կոռոզիայի:

- Միջնորմների ընդհանուր մակերեսի մոտ 60 տոկոսը փլուզված կամ կիսափլուզված են, մոտ 30 տոկոսում կան ուժեղ, մոտ 40 տոկոսում՝ զգալի վնասվածքներ: Վնասված միջնորմներում կան 5-15 մմ, իսկ որոշ տեղերում մինչև 20 մմ բացվածքի լայնությամբ տարբեր ուղղությամբ ուղղություններով միջանցիկ ճաքեր: Միջնորմների ամրակապումը կրող կոնստրուկցիաների հետ անբավարար է, իսկ դրանց միացման կարանների սվաղին առկա են 5-15 մմ բացվածքի լայնությամբ ճաքեր, և միջնորմների զգալի մասը կարող է շրջվել ու ընկնել նույնիսկ միջին ուժգնության ցնցումների դեպքում:

- Դռները, պատուհանները, հատակներն ու ներքին հարդարանքն ամբողջությամբ քանդված ու տեղահանված են:

- Սանդուղքների պողպատե թեքահեծանները չունեն բավարար հակակոռոզին պաշտպանիչ շերտ, ինչի հետևանքով զրոցված պողպատե էլեմենտները ենթարկվել են զգալի կոռոզիայի: Հատիկավոր հավաքովի ե/բ աստիճաններն ունեն զգալի տեղաշարժեր միմյանց նկատմամբ: Շենքի գլխավոր ճակատին կից դրսի սանդուղքների հատիկավոր հավաքովի ե/բ աստիճաններն կոտրված են:

- Շենքը չունի ինժեներական ներքին ցանց՝ ջրազծերի, կոյուղու, էլեկտրականության և այլն:

- Շենքի սալվածքի ընդհանուր մակերեսի մոտ 70 տոկոսը բացակայում է, մոտ 30 տոկոսում կան ուժեղ վնասվածքներ, ինչի հետևանքով մթնոլորտային ու մակերևութային ջրերը ներթափանցում են շենքի կոնստրուկտիվ տարրերը և կարող են ներթափանցել նաև հիմնատակ՝ պատճառ հանդիսանալով հիմնատակի գրունտի անհավասարաչափ նստվածքին:

Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 08.12.2009թ-ի թիվ 282-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումների», շենքի տեխնիկական վիճակը գտահատվել է «անբավարար» երրորդ աստիճան), այն է կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր է միայն կապիտալ նորոգումից հետո:

• **Շիկահող բնակավայրի ակումբի շենքը** եռահարկ կառույց է: Ներկա պահին տարաբնույթ միջոցառումների և հանդիպումների համար օգտագործվում են միայն 1-ին և 2-րդ հարկերը: 3-րդ հարկում է գտնվում գյուղի գրադարանը, որն ակումբի տանիքի ծածկույթի թերությունների և մթնոլորտային տեղումների պարբերաբար շենքի կոնստրուկտիվ տարրեր նեթափանցման պատճառով անհնար է օգտագործել: Վերանորոգվող տանիքի մակերեսը կազմում է 568մ²:

Համաձայն Շիկահող գյուղի ակումբի շենքի տեխնիկական վիճակի և դրա տանիքի վերանորոգման հնարավորության վերաբերյալ եզրակացության՝ հաշվի առնելով ակումբի շենքի բավարար տեխնիկական վիճակը, ու այն հանգամանքը, որ տանիքի նախատեսվող վերանորոգման աշխատանքները չեն առնչվում կրող կոնստրուկցիաների միջամտմանը և միտված են շենքի պահպանմանը և դրա անհրաժեշտ ջերմային ռեժիմի ապահովմանը, տանիքի վերանորոգման աշխատանքները նպատակահարմար են, ընդ որում նկատի ունենալով տանիքի ծածկույթի ալիքավոր ասրոշիֆերի վնասակար ազդեցությունը մարդկանց առողջության վրա, այն պետք է ամրոգությամբ ապամոնտաժվի և փոխարինվի պողպատե թիթեղով:

• **Արծվանիկ բնակավայրի հիմնական գործող բուժկենդ** գտնվում է այնպիսի անմխիթար վիճակում, որ այն վերանորոգելու փոխարեն որոշում է կայացվել գյուղի մանկապարտեզի համեմատաբար ավելի բարվոր վիճակում գտնվող շենքում հատկացնել տարածք բուժկենտի համար և վերանորոգել այն: 2020 թվականին ամսական միջինում բուժկենտը սպասարկել է 81 բուժացելու:

Համաձայն Արծվանիկ գյուղի մանկապարտեզի շենքի տեխնիկական վիճակի և դրա առաջին հարկում բուժկենտի տեղամասը ստեղծելու հնարավորության վերաբերյալ եզրակացության՝ շենքի կրող կոնստրուկցիաները չունեն որևէ նշանակալից ճաքեր, ճկվածքներ և այլ տիպի վտանգավոր վնասվածքներ: Դրանք գտնվում են բավարար տեխնիկական վիճակում: Շենքի նախատեսվելիք բուժկենտի հատվածամասը գտնվում է բարձիթողի վիճակում: Հաշվի առնելով մանկապարտեզի շենքի բավարար տեխնիկական վիճակը և նախկինում կատարված դրա ուժեղացման աշխատանքները և այն հանգամանքը, որ նախատեսվելիք բուժկենտի ստեղծումը հիմնականում չի առնչվում շենքի կրող կոնստրուկցիաների միջամտմանը և ձևափոխմանը, բուժկենտի տեղամասի ստեղծման աշխատանքները նպատակահարմար են հետևյալ պայմանով՝

✓ Նոր իրականացվելիք բուժկենտի տեղամասը առանձնացնել մանկապարտեզից բաժանարար պատով, առանձին հիմքերով:

✓ Բուժկենտի տեղամասի պատերը ներսի կողմից մաքրել սվաղաշերտից և իրականացնել նորը պողպատե ցանցի վրայով, ցամաքափազային շաղախով:

✓ Բուժկենտի տեղամասի հողե գրունտից հատակները բերել հավասար նիշի և իրականացնել պողպատե ցանցով բետոնե նոր հատակաշերտ:

- ✓ Գոյություն ունեցող լուսամուտի բացվածքի պատուհանագոգի տակի շարվածքի ապամոնտաժմամբ և այն պողպատե տարրերից շրջակայքում իրականացնել առանձին մուտքադուռը:
- ✓ Կատարել բուժկետի տեղամասի նորոգման աշխատանքներ:

• **«Կապանի թիվ 3 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքը** կառուցվել է 1985-86 թվականներին: Երկար տարիներ դպրոցը ջեռուցվում էր փայտե վառարաններով, իսկ 2007 թվականից առ այսօր էլեկտրական տաքացուցիչներով: Նման ջեռուցման միջոցներով դժվար է լինում ապահովել անհրաժեշտ ջերմային ուժի մը, տաքացնել դասասենյակներն ու դահլիճը: Հետևաբար, ցուրտ եղանակային պայմաններում նվազում է դպրոց հաճախող երեխաների թիվը: Ջերմաստիճանի տատանումներից առաջանում են նաև խնդիրներ լարային, ստեղնաշարային, փողային գործիքների լարվածքի հետ կապված:

«Կապան քաղաքի մարմնամարզության մանկապարտեզական մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքը կառուցվել է 1977 թվականին: Վերջին 10 տարիների ընթացքում մասնակի վերանորոգվել են միայն մարզադպրոցի սահմանագույցներն ու հանդերձարանները, իսկ 2019 թվականին մարզադպրոցն ապահովվել է ջեռուցման համակարգով և հիմնանորոգվել է տանիքը: Մարզադպրոց է հաճախում 189 սան, որոնք ամեն տարի մասնակցելով տարբեր միջազգային մրցաշարերի, վերադառնում են մրցանակային տեղեր գրաված: 2021 թվականին վերանորոգման համար նախատեսվող ընդհանուր մակերեսը կազմում է 1140,87մ²:

Համաձայն Մարմնամարզության մարզադպրոց ՀՈԱԿ-ի մասնաշենքի տեխնիկական վիճակի և դրա վերանորոգման հնարավորության վերաբերյալ եզրակացության կառույցի կրող կոնստրուկցիաները չունեն որևէ նշանակալից ճաքեր, ճկվածքներ և այլ տիպի վտանգավոր վնասվածքներ: Դրանք գտնվում են բավարար տեխնիկական վիճակում: Կառույցի ներքին հարդարանքն ունի առանձին վնասված տեղամասեր, ինրպես նաև վերնածածկում ջրաթակոցների հետքեր առաջացած նախկինում տանիքածածկույթի վնասվածքների հետևանքով: Շենքի նորոգման աշխատանքների իրականացումը տեխնիկապես հանարվոր է գործող շիննորմերին համապատասխան մշակված և սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծի համաձայն:

Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին

Ծրագրի իրականացման արդյունքում սահմանամերձ գյուղական համայնքներում (հայտում ներկայացված բնակավայրերը բոլորը սահմանամերձ են) կունենանք բարեկարգ, ժամանակակից, տեխնիկական անվտանգության չափանիշներին համապատասխանող և իրենց նպատակին ծառայող՝ պատշաճ որակի համայնքային ծառայություններ մատուցող ու բնակիչների ժամանցն ապահովող վարչական, ակումբների, հանդիսությունների սրահների 6 շենք: Հարկ է նշել, որ տվյալ ծրագրի կյանքի կոչելը գյուղապահպան նշանակություն ունի և կնպաստի արտագաղթի կանխմանը:

665 բնակիչ ունեցող Արծվանիկ բնակավայրի համար բարեկարգ բուժկետի աուկայությունը կբարձրացնի բնակչությանը տրամադրվող առաջին բուժօգնության և բուժսպասարկման ծառայության մակարդակը գյուղում:

Կապանի թիվ 3 երաժշտական դպրոցի ջեռուցման պայմաններում հնարավոր կլինի ներգրավել էլ ավելի շատ սաներ (ներկա պահին 99 աշակերտ է), կավելանա հաճախումների թիվը,

ինչպես նաև երաժշտական գործիքների լարվածքի հետ կապված խնդիրները կնվազեն:

Կապան քաղաքի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցի վերանորոգման ծրագրի իրականացման արդյունքում 16 աշխատակից ու 189 սան էլ ավելի մեծ ոգևորվածությամբ կանցկացնեն իրենց պարապմունքները: Բարեկարգ և հարմարավետ պայմաններով մարզադպրոցի առկայությունն էլ ավելի կխթանի առողջ ապրելակերպը համայնքում: Ծրագրի իրականացման արդյունքում հնարավոր կլինի ավելացնել սաների թիվը: Նորոգված մարզադպրոցում հնարավոր կլինի սպորտային միջոցառումներ կազմակերպել հանրապետության մյուս մանկապատանեկան մարմնամարզության մարզադպրոցների սաների մասնակցությամբ:

Ծրագրի իրականացման արդյունքում կբարելավվի այդ շենքերում աշխատողների և դրանց ծառայություններից օգտվողների պայմանները:

Ծրագիրը համապատասխանում է համայնքի 2019-2023թթ զարգացման պլանին, և ներառված է Կապան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանում: Եվ հնգամյա զարգացման ծրագիրը, և տարեկան աշխատանքային պլանը ունեցել են հանրային քննարկումներ և հաստատվել են համայնքի ավագանու կողմից: Կապան համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի և տարեկան աշխատանքային պլանի հանրային քննարկմանը հասարակական շենքերի նորոգման ծրագիրը՝ որպես սուբվենցիային ներկայացվող ծրագիր, ներկայացվել է հանրությանը և արժանացել դրական արձագանքի և հավանությանը:

- Համապատասխան ուսումնասիրություններ, չափումներ, նախնական հաշվարկների կատարում /կատարված է, մինչև 2021 թվականի հունվարի 20/:
- Տեխնիկական բնութագրերի կազմում / կատարված է, մինչև 2021 թվականի հունվարի 20/:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրում /մինչև 2021 թվականի ապրիլ-մայիս/:
- Նորոգման աշխատանքների համար մրցույթի հայտարարում, արդյունքների ամփոփում, պայմանագրի կնքում /մինչև 2021 թվականի սեպտեմբեր/:
- Աշխատանքների իրականացում և ֆինանսավորում ըստ փուլերի /մինչև 2022 թվականի հուլիսի 1/:

Շինարարական աշխատանքներ՝ Ծավ բնակավայրի վարչական շենք

1. Պարփակող պատերի վնասվածքների վերականգնում և միջնորմների ամրակապում
2. Միջհարկային ծածկի սալերի միջև կարանների լցում բետոնով կամ շաղախով
3. Հին տանիքի քանդում և նորի կառուցում՝ արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ
4. Հարդարման աշխատանքների իրականացում
5. Հին դռների և պատուհանների քանդում և նորերի տեղադրում
6. Սանտեխնիկական աշխատանքների իրականացում
7. Էլեկտրատեխնիկական աշխատանքների իրականացում
8. Շենքի շրջակայքի սալվածքի վերականգնում և տարածքի քարակարգում

Համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ **Ծավ բնակավայրի վարչական շենքի նորոգման** շինարարական աշխատանքների գումարը կազմում է 29751,594 հազար դրամ, այդ թվում տեխնիկական հսկողություն՝ 579,956 հազար դրամ,

Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները

հեղինակային հսկողություն՝ 173,992 հազար դրամ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրման համար ծախսվել է 490,0 հազար դրամ, նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության համար՝ 50,0 հազար դրամ, իսկ տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության համար ծախսվել է 140,0 հազար դրամ: Ընդհանուրը /նախագծանախահաշվային փաստաթղթեր, փաստաթղթերի փորձաքննություն, նորոգման աշխատանքներ, այդ թվում՝ տեխնիկական և հեղինակային հսկողություններ, տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննություն/ 30431,594 հազար դրամ:

- Վերահսկողություն, կատարված աշխատանքների ընդունում/ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31/:

Շինարարական աշխատանքներ՝ Վարդավանք բնակավայրի ակումբի շենք

1. Ե/ք գոտու կառուցում պարփակող պատերի պարագծով 2,9 մ նիշում և պատերի հետ ամրացում
2. Պարփակող պատերի վնասվածքների վերականգնում
3. Հին հատակների և առաստաղի քանդում և նոր հատակների և նոր առաստաղի տեղադրում
4. Հին տանիքի քանդում և նորի կառուցում՝ արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ
5. Հարդարման աշխատանքների իրականացում
6. Հին դռների և պատուհանների քանդում և նորերի տեղադրում
7. Սանտեխնիկական աշխատանքների իրականացում
8. Էլեկտրատեխնիկական աշխատանքների իրականացում
9. Շենքի շրջակայքի սալվածքի վերականգնում և տարածքի բարեկարգում

Համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ **Վարդավանք բնակավայրի ակումբի շենքի նորոգման** շինարարական աշխատանքների գումարը կազմում է 16617,097 հազար դրամ, այդ թվում տեխնիկական հսկողություն՝ 323,919 հազար դրամ, հեղինակային հսկողություն՝ 97,174 հազար դրամ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրման համար ծախսվել է 550,0 հազար դրամ, նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության համար՝ 50,0 հազար դրամ, իսկ տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության համար ծախսվել է 185,0 հազար դրամ: Ընդհանուրը /նախագծանախահաշվային փաստաթղթեր, փաստաթղթերի փորձաքննություն, նորոգման աշխատանքներ, այդ թվում՝ տեխնիկական և հեղինակային հսկողություններ, տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննություն/ 17402,097 հազար դրամ:

- Վերահսկողություն, կատարված աշխատանքների ընդունում/ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31/:

Շինարարական աշխատանքներ՝ Վերին Խոտանան բնակավայրի հանդիսությունների սրահի շենք

1. Շենքի հետևի պատի գետնախարսխային մասերում ջրամեկուսիչ շերտի իրականացում
2. Հին հատակների և առաստաղի քանդում և նոր հատակների և նոր առաստաղի տեղադրում

3. Կոնստրուկտիվ տարրերի վնասվածքների ու թերությունների վերացում

4. Հին տանիքի քանդում և նորի կառուցում՝ արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ

5. Հարդարման աշխատանքների իրականացում

6. Հին դռների և պատուհանների քանդում և նորերի տեղադրում

7. Սանտեխնիկական աշխատանքների իրականացում

8. Էլեկտրատեխնիկական աշխատանքների իրականացում

9. Շենքի շրջակայքի սալվածքի վերականգնում և տարածքի բարեկարգում

Համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ **Վերին Խոտանան բնակավայրի հանդիսությունների սրահի նորոգման** շինարարական աշխատանքների գումարը կազմում է 16 894,706 հազար դրամ, այդ թվում տեխնիկական հսկողություն՝ 329,332 հազար դրամ, հեղինակային հսկողություն՝ 98,793 հազար դրամ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրման համար ծախսվել է 490,0 հազար դրամ, նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն՝ 50,0 հազար դրամ, իսկ տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության համար ծախսվել է 170,0 հազար դրամ: Ընդհանուրը /նախագծանախահաշվային փաստաթղթեր, նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն, հիմնանորոգման աշխատանքներ, այդ թվում՝ տեխնիկական և հեղինակային հսկողություններ, տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննություն/՝ 17604,706 հազար դրամ:

- Վերահսկողություն, կատարված աշխատանքների ընդունում/մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31/:

Շինարարական աշխատանքներ՝ Չափնի բնակավայրի հանդիսությունների սրահի շենք

1. Ե/բ գոտու կառուցում պարփակող պատերի պարագծով 2,7 մ նիշում և պատերի հետ ամրացում

2. Հին հատակների և առաստաղի քանդում և նոր հատակների և նոր առաստաղի տեղադրում

3. Կոնստրուկտիվ տարրերի վնասվածքների ու թերությունների վերացում

4. Շենքի հետևի պատի գեոնախարսխային մասերում ջրամեկուսիչ շերտի իրականացում

5. Հին տանիքածածկույթի, մետաղյա և փայտյա կոնստրուկցիաների քանդում և նորի կառուցում՝ արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ

6. Հարդարման աշխատանքների իրականացում

7. Հին դռների և պատուհանների քանդում և նորերի տեղադրում

8. Սանտեխնիկական աշխատանքների իրականացում

9. Էլեկտրատեխնիկական աշխատանքների իրականացում

10. Շենքի շրջակայքի սալվածքի վերականգնում և տարածքի բարեկարգում

Համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ **Չափնի բնակավայրի հանդիսությունների սրահի նորոգման** շինարարական աշխատանքների գումարը կազմում է 21963,148 հազար դրամ, այդ թվում տեխնիկական հսկողություն՝ 428,126 հազար դրամ,

հեղինակային հսկողություն՝ 128,445 հազար դրամ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրման համար ծախսվել է 490,0 հազար դրամ, նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն՝ 50,0 հազար դրամ, իսկ տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության համար ծախսվել է 170,0 հազար դրամ: Ընդհանուրը /նախագծանախահաշվային փաստաթղթեր, նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն, հիմնանորոգման աշխատանքներ, այդ թվում՝ տեխնիկական և հեղինակային հսկողություններ, տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննություն/՝ 22673,148 հազար դրամ:

- Վերահսկողություն, կատարված աշխատանքների ընդունում/մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31/:

Շինարարական աշխատանքներ՝ Դավիթ Բեկ բնակավայրի մշակույթի տան շենք

Պատերի ուժեղացում երկկողմանի տորկրետ սվաղով՝ 6սմ հաստությամբ

1. Միջհարկային ծածկի և վերնածածկի սալերի վրա ե/բ վրաշերտի իրականացում՝ 6 սմ հաստությամբ
2. Հավաքովի ե/բ կողավոր սալերի ամրակապում միմյանց հետ
3. Լայնական և երկայնական պատերի միացման տեղերում երկկողմանի տորկրետ սվաղով՝ 6սմ հաստությամբ
4. Շենքի արտաքին պատի ջրամեկուսացում՝ շենքի հետնամասի երկայնքով
5. Արտաքին աստիճանավանդակի կառուցում
6. Հին թիթեղյա տանիքածածկույթի քանդում հիմնակմախքով և նոր պրոֆիլավոր 0,5 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղյա ծածկույթի կառուցում՝ մետաղյա հիմնակմախքով
7. Շենքի շրջակայքի սալվածքի վերանորոգում
8. Արտաքին քանդված պատի ուժեղացում 3 մ լայնությամբ և շենքի ամբողջ բարձրությամբ՝ միաձույլ ե/բ շապիկով

Համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ Դավիթ Բեկ բնակավայրի մշակույթի տան շենքի վերականգնման շինարարական աշխատանքների գումարը կազմում է 46279,019 հազար դրամ, այդ թվում՝ տեխնիկական հսկողություն՝ 902,126 հազար դրամ, հեղինակային հսկողություն՝ 270,637 հազար դրամ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրման համար ծախսվել է 998,0 հազար դրամ, նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության համար՝ 100,0 հազար դրամ տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության համար ծախսվել է 185,0 հազար դրամ: Ընդհանուրը /նախագծանախահաշվային փաստաթղթեր, փաստաթղթերի փորձաքննություն, նորոգման աշխատանքներ, այդ թվում՝ տեխնիկական և հեղինակային հսկողություններ, տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննություն/՝ 47562,019 հազար դրամ:

- Վերահսկողություն, կատարված աշխատանքների ընդունում/մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31/:

Շինարարական աշխատանքներ՝ Շիկահող բնակավայրի ակումբի շենքի տանիք

1. Հին ասբոհերձաքարե տանիքածածկի ապամոնտաժում,
2. Թիթեղյա տանիքածածկույթի, ջրիոս ճոռերի քանդում

3. Կնասված փայտանյութի քանդում
4. Փայտե կոնստրուկցիաների նորոգում, ուղղում, ուժեղացում, ավելացում նորով
5. Օդափոխության պատուհանների նորոգում
6. Տանիքածածկի իրականացում պրոֆիլային ցինկապատ թիթեղից
7. Փոքր ծածկերի, զազաթագծի, ջրիոս ճոռերի, իրականացում հարթ ցինկապատ թիթեղից
8. Ջրիորդան խողովակների և ձագարների փոխարինում
9. Տանիքի կոնստրուկցիաների և կավարամածի հակահրդեհային պաշտպանություն

Համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի Շիկահող բնակավայրի ակումբի շենքի տանիքի նորոգման շինարարական աշխատանքների գումարը կազմում է 8094,61 հազար դրամ, այդ թվում տեխնիկական հսկողություն՝ 157,8 հազար դրամ, հեղինակային հսկողություն՝ 47,34 հազար դրամ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրման համար ծախսվել է 350,0 հազար դրամ, նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության համար ծախսվել է 32,4 հազար դրամ: Ընդհանուրը /նախագծանախահաշվային փաստաթղթեր, փաստաթղթերի պետական փորձաքննություն, նորոգման աշխատանքներ, այդ թվում՝ տեխնիկական և հեղինակային հսկողություններ՝ 8477,01 հազար դրամ:

- Կերահսկողություն, կատարված աշխատանքների ընդունում/ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31/:

Շինարարական աշխատանքներ՝ «Կապանի թիվ 3 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի ջեռուցման համակարգի կառուցում

1. Ջեռուցման կաթսաների, պոմպերի, ծխատար խողովակի տեղադրում
2. Ջեռուցման մարտկոցների, պոլիպրոպիլենային խողովակների և դետալների տեղադրում
3. Քանդման և անցքերի բացման աշխատանքների իրականացում
4. Հատակային աշխատանքների իրականացում
5. Սառը ջրամատակարարման իրականացում
6. Էլեկտրամատակարարման աշխատանքների իրականացում

Համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ «Կապանի թիվ 3 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքների գումարը կազմում է 7698,11 հազար դրամ, այդ թվում տեխնիկական հսկողություն՝ 124,21 հազար դրամ, հեղինակային հսկողություն՝ 37,3 հազար դրամ: Ընդհանուրը / նորոգման աշխատանքներ, տեխնիկական և հեղինակային հսկողություններ՝ 7698,11 հազար դրամ:

- Կերահսկողություն, կատարված աշխատանքների ընդունում/ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31/:

Շինարարական աշխատանքներ՝ Արծվանիկ բնակավայրի բուժկետ

1. Պատուհանի բացվածքի փոխարինում դռան բացվածքով
2. Միջնորմային պատերի տեղադրում

3. Հին հատակների քանդում, նոր հատակների և կախովի առաստաղի տեղադրում
4. Հարդարման աշխատանքների / սվաղ, ներկարարական/ իրականացում
5. Նոր դռան տեղադրում
6. Սանտեխնիկական աշխատանքների իրականացում
7. Էլեկտրատեխնիկական աշխատանքների իրականացում
8. Խմելու ջրի պոլիէթիլենային բաքի /500 խորմ./ տեղադրում

Համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ Արծվանիկ բնակավայրի բուժկետի նորոգման շինարարական աշխատանքների գումարը կազմում է 6 209,92 հազար դրամ, այդ թվում տեխնիկական հսկողություն՝ 121,054 հազար դրամ, հեղինակային հսկողություն՝ 36,314 հազար դրամ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրման համար ծախսվել է 400,0 հազար դրամ, ծախսվել է հազար դրամ, նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության համար՝ 45,0 հազար դրամ: Ընդհանուրը /նախագծանախահաշվային փաստաթղթեր, փաստաթղթերի փորձաքննություն, նորոգման աշխատանքներ, այդ թվում՝ տեխնիկական և հեղինակային հսկողություններ/՝ 6 654,92 հազար դրամ:

- Վերահսկողություն, կատարված աշխատանքների ընդունում/ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31/:

Շինարարական աշխատանքներ՝ «Կապան քաղաքի մարմնամարզության մանկապատանեական մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենք

1. Ներքին հարդարման աշխատանքների իրականացում
2. Նոր էլեկտրամոնտաժային աշխատանքների իրականացում
3. Հին ջեռուցման սարքերի և խողովակների ապամոնտաժում
4. Հին տախտակե հատակների քանդում և նոր տախտակե հատակների տեղադրում/մինչև 30 % փոխարինմամբ/
5. Աստիճանավանդակների սալիկապատում
6. Շենքի արտաքին պատի և կից լողավազանի պատի ու հատակի ջրամեկուսացում
7. Շենքի կողային հատվածին կից տարածքի բարեկարգում և սալիկապատում
8. Նոր ցանկապատի տեղադրում

Համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ «Կապան քաղաքի մարմնամարզության մանկապատանեական մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի վերանորոգման շինարարական աշխատանքների գումարը կազմում է 86321,46 հազար դրամ, այդ թվում տեխնիկական հսկողություն՝ 1517,375 հազար դրամ, հեղինակային հսկողություն՝ 505,796 հազար դրամ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության համար ծախսվել է 100,0 հազար դրամ: Ընդհանուրը՝ /նախագծանախահաշվային փաստաթղթեր, փաստաթղթերի փորձաքննություն, նորոգման աշխատանքներ, այդ թվում՝ տեխնիկական և հեղինակային հսկողություններ/՝ 86421,46 հազար դրամ:

	• Կերահսկողություն, կատարված աշխատանքների ընդունում/մինչև 2022 թվականի հուլիսի 1/: Նախատեսվում է իրականացնել մոտ 239 829,664 հազար դրամի շինարարական աշխատանքներ, այդ թվում՝ տեխնիկական հսկողությունը՝ 4 483,898 հազար դրամ, հեղինակային հսկողությունը՝ 1 395,791 հազար դրամ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրման, փորձաքննության և սեյսմիկ փորձաքննության համար ծախսվել է 5 095,4 հազար դրամ: Ընդհանուրը՝ հասարակական շենքերի նորոգում՝ 244 925,064 հազար դրամ:
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի	Ծրագրում ընդգրկված շենքերը համայնքային սեփականություն են: Նախատեսվող աշխատանքները կապիտալ բնույթի են:
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Տվյալ հայտում ընգրկված գյուղական բնակավայրերում իրականացվելիք ծրագրերը կունենան միայն դրական ազդեցություն համայնքի բնակիչների վրա, և, առհասարակ, ունեն գյուղապահպան նպատակ և կնպաստի գյուղերից արտագաղթի կանխմանը: Տարեց տարի բնակիչների քանակը ավելացող Արծվանիկ բնակավայրում բարեկարգ բուժկետի առկայությունը կբարձրացնի բնակչությանը տրամադրվող առաջին բուժօգնության և բուժսպասարկման ծառայության մակարդակը: Կապանի թիվ 3 երաժշտական դպրոցի ջեռուցման պայմաններում հնարավոր կլինի ներգրավել էլ ավելի շատ սաներ (ներկա պահին 99 աշակերտ է), կավելանա հաճախումների թիվը, ինչպես նաև երաժշտական գործիքների լարվածքի հետ կապված խնդիրները կնվազեն: Հաշվետու համերգներն էլ կանցնեն ավելի ջերմ ու տաք միջավայրում: Կապան քաղաքի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցի վերանորոգման ծրագրի իրականացման արդյունքում 16 աշխատակից ու 189 սան էլ ավելի մեծ ոգևորվածությամբ կանցկացնեն իրենց պարապմունքները: Բարեկարգ և հարմարավետ պայմաններով մարզադպրոցի առկայությունն էլ ավելի կխթանի առողջ ապրելակերպը համայնքում: Ծրագրի իրականացման արդյունքում հնարավոր կլինի ավելացնել սաների թիվը: Նորոգված մարզադպրոցում հնարավոր կլինի սպորտային միջոցառումներ կազմակերպել հանրապետության մյուս մանկապատանեկան մարմնամարզության մարզադպրոցների սաների մասնակցությամբ:
Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը	Ծրագրի իրականացման արդյունքում հիմնական աշխատատեղ չի ստեղծվի: Ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր աշխատատեղերը և դրանց նկարագրությունները. • Ծավ բնակավայրի վարչական շենքի նորոգման աշխատանքներ – ընդամենը 10 բանվոր /շինարարական՝ քանդման, տանիքային, հարդարման, ներկարարական, բարեկարգման, կոյուղու, ջրամատակարարման, ջեռուցման, էլեկտրամատակարարման և գույքի տեղադրման աշխատանքներին օժանդակելու համար/: • Վարդավանք բնակավայրի ակումբի շենքի նորոգման աշխատանքներ – ընդամենը 6 բանվոր /շինարարական՝ քանդման, տանիքային, հարդարման, ներկարարական, բարեկարգման,

կոյուղու, ջրամատակարարման, ջեռուցման, էլեկտրամատակարարման և գույքի տեղադրման աշխատանքներին օժանդակելու համար:

- Վերին Խոտանան բնակավայրի հանդիսությունների սրահի նորոգման աշխատանքներ – ընդամենը 6 բանվոր /շինարարական՝ քանդման, տանիքային, հարդարման, ներկարարական, բարեկարգման, կոյուղու, ջրամատակարարման, ջեռուցման, էլեկտրամատակարարման և գույքի տեղադրման աշխատանքներին օժանդակելու համար:

- Չափնի բնակավայրի հանդիսությունների սրահի նորոգման աշխատանքներ – ընդամենը 8 բանվոր /շինարարական՝ քանդման, տանիքային, հարդարման, ներկարարական, բարեկարգման, կոյուղու, ջրամատակարարման, ջեռուցման, էլեկտրամատակարարման և գույքի տեղադրման աշխատանքներին օժանդակելու համար:

- Դավիթ Բեկ բնակավայրի մշակույթի տան շենքի վերականգնման աշխատանքներ – ընդամենը 15 բանվոր /շինարարական՝ քանդման, տանիքային, հարդարման, ներկարարական, բարեկարգման, կոյուղու, ջրամատակարարման, ջեռուցման, էլեկտրամատակարարման և գույքի տեղադրման աշխատանքներին օժանդակելու համար:

- Շիկահող բնակավայրի ակումբի շենքի տանիքի նորոգման աշխատանքներ – ընդամենը 5 բանվոր /շինարարական՝ քանդման, տանիքային, հարդարման, ներկարարական, բարեկարգման, կոյուղու, ջրամատակարարման, ջեռուցման, էլեկտրամատակարարման և գույքի տեղադրման աշխատանքներին օժանդակելու համար:

- Կապանի թիվ 3 երաժշտական դպրոցի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ – ընդամենը 5 բանվոր /շինարարական՝ քանդման, հարդարման, ներկարարական, ջեռուցման, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման աշխատանքներին օժանդակելու համար:

- Արծվանիկ բնակավայրի բուժկետի նորոգման աշխատանքներ – ընդամենը 6 բանվոր /շինարարական՝ քանդման, հարդարման, ներկարարական, կոյուղու, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման և գույքի տեղադրման աշխատանքներին օժանդակելու համար:

- Կապանի քաղաքի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցի վերանորոգման աշխատանքներ – ընդամենը 18 բանվոր /շինարարական՝ քանդման, հարդարման, ներկարարական, կոյուղու, ջրամատակարարման, հատակային, էլեկտրամատակարարման և գույքի տեղադրման աշխատանքներին օժանդակելու համար:

Ենթադրվում է, որ մասնագիտացված շինարարական կազմակերպությունները կունենան համապատասխան մասնագետներ /աշխղեկ, վարպետներ, վարորդ և այլն/ և այդ աշխատանքների իրականացման համար ժամանակավոր նոր աշխատատեղեր չեն ստեղծվի:

Ընդհանուր հասարակական շենքերի նորոգման համար կստեղծվի 79 ժամանակավոր աշխատատեղ:

Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը

Նախորդ տարվա բյուջեն՝ 4,746,946,0 հազար դրամ.

Պլանը

Փաստացին Տոկոսը

Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում՝	4,229,601,2	3,001,834,4	71
-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	2,451,983,3	2,453,241,1	100,1
- Սեփական եկամուտներ	715,214,5	714,969,8	99,97
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	1,836,034,3	548,593,3	29,9
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝	4,746,946,0	2,694,222,3	56,8
- Վարչական բյուջեի ծախսեր	2,451,983,3	1,851,983,3	75,5
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	2,353,379,1	842,239,0	35,4
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից՝	2,353,379,1	894,217,1	38
- ճանապարհաշինություն	1,035,540,9	437,129,3	42,2
- ջրամատակարարում	232,396,3	34,993,5	15,1
- խողովակաշարային և այլ տրանսպորտ	24,762,0	24,694,6	99,7
-աղբահանում	121,955,2	111,734,3	91,6
-բնակարանային շինարարություն	349,730,6	166,659,5	47,7
-ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	93,626,2	31,180,2	33,3
-մշակույթ	200,106,3	17,831,78,9	8,9
-կրթություն	324,698,0	69,019,0	21,3
-պաշտպանություն	975,0	975,0	100

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

2,856,018,4 հազար դրամ.

հազար

դրամ

	Պլանը
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների խորում	2,856,018,4
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	2,771,267,5
- սեփական եկամուտներ	803,922,3
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	84,750,9
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝	2,856,018,4
- Վարչական բյուջեի ծախսեր	2,771,267,5
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	84,750,9
Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, որից՝	96,750,9
-ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	528,0
-պաշտպանություն	2,000,0
-տրանսպորտ	10,000,0
-աղբահանություն	47,200,0
-շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար	37,022,9

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով)

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի /ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը/ հաշվին նշված ծրագիրը հնարավոր չէ իրականացնել, քանի որ բյուջետային մուտքերն ուղղվում են Կապանի համայնքապետարանի և ենթակա 33 համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների պահպանմանը /այդ թվում՝ աշխատավարձերի վճարում/ և համայնքի մյուս պարտադիր խնդիրների լուծմանը:

